Հաստատում եմ `

Տնօրենի ժ/պ` Ռ. Ամիրզատյան

ՀՀ Գեղարքունիքի մարզի Մաքենիս գյուղի միջնակարգ դպրոց
Դասղեկի տարեկան աշխատանքային պլան

8-րդ դասարան

Դասղեկ ` Էմմա Ավետիսյան

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

**2022-2023 ուստարի**

<u>Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները</u>

1. **Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)**

8-րդ դասարանում սովորում է 5աշակերտ,3 տղա և 2 աղջիկ: Բոլորն էլ մեծացել և դաստիարակվել են առողջ և ապահով ընտանիքներում:

2. Ուստարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքները

ա/ Կիրառել բոլոր մեթոդները ու հնարները աշակերտների մեջ սերմանելու, մշակելու և զարգացնելու սեր դպրոցի, ուսման, դպրոցական կարգ ու կանոնի նկատմամբ:

բ/ Մի փոքր դժվար է այն առումով որ դասարանում տղաների թիվը բավականին մեծ է, սակայն այս առումով նախորդ 8 տարիների ընթացքում մեծ աշխատանք տարվել է:

գ/ Հետևողական լինել, որ դպրոցում հակահամաճարակային կանոնները պահպանումը ու ուսուցման պրոցեսում, խմբերի ճիշտ բաշխումը, հեռավորության պահպանումը:

դ/ Աշխատանք տանել ուսման որակը բարձրացնել, չլինեն անհարգելի բացակայություններ, ուշացումներ:

3. **<u>Հայեցի դաստիարակություն</u>**

**<u>Հոգևոր դաստիարակությունը</u>**

**<u>այս տարիքում շատ կարևոր է արժեքային համակարգի ձևավորման, ինչ պես նաև մշակութային ժառանգությունը փոխանցելու համար: Այն նպատակ ունի բարոյական արժեքներ սերմանելու: Այդ իսկ պատճառով աշակերտին պետք է գաղափար տալ քրիստոնեության մասին, ծանոթացնել հոգևոր կենտրոնին՝ Էջմիածնին:</u>**

**- Գեղագիտական դաստիարակությունը**

Սերն ու հարգանքն է գեղեցիկի նկատմամբ: Մարդը դեռ վաղ հասակից սկսում է գնահատել իր շրջապատը և շրջապատող միջավայրն իր բոլոր դրսևորումներով: Գեղագիտական դաստիարակությունը կազմում է մարդու ընդհանուր զարգացման զգալի մասը:

**- Ռազմահայրենաիրական դաստիարակությունը**

**Գրագետ հոգեպես ու ֆիզիկապես կոփված, բանակի մասին տեղակայված ու պատրաստված սերունդ դաստիարակել ու գործընթաց է: Հետևաբար**
**Մեր առաջնահերթ խնդիրն է աշակերտների մեջ ձևավորել ռազմահայրենաիրական ոգի:**

- Ֆիզիկական դաստիարակությունը

Ուղղված է առողջության ամրապնդմանն ու պահմանմանը, մարդու մտավոր և ֆիզիկական կարողությունների զարգացմանը: Այն իրենից ներկայացնում է մշակույթի մի մաս, որն ընդգրկում է մի շարք արժեքների ու գիտելիքների համադրում:

- Աշխատանքային դաստիարակություն

Յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա,որ միայն ազնիվ աշխատանքով կարող է վաստակել հանապազօրյա հացը: Աշակերտները պետք է պատրաստ լինեն հանրօգուտ աշխատանքի: Տունը, դպրոցում և ամենուր պետք է պահպանեն մաքրություն:

- Բնապահպանական դաստիարակությունը ոչ միայն գիտելիքների ձևավորում է, այլև գործնական կարողությունների զարգացումը: Աշակերտներին զինել բնության պահպանության վերաբերյալ գիտելիքներով: Ձևավորել բնության հանդեպ հոգատար վերաբերմունք: Ճանաչել և պահպանել բուսական և կենդանական աշխարհ:

- Դպրոց-ընտանիք կապը Ամուր հիմքերի վրա դնել դպրոց-ընտանիք կապը մասնակցել ծնողկոմիտեի հետ տարվող աշխատանքներին: Հրավիրել ծնողական ժողովներ, քննարկել ընթացիկ հարցեր: Անհրաժեշտության դեպքում կատարել տուն, այցելություններ: Եթե դպրոցն ու ծնողները հաջողությամբ համագործակցում են ապա հաղթանակն ապահովված է:

## ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

| Ուս/շ | Ուս. Աշխատանքի բովանդակությունը | Կատարող |
|---|---|---|
| I | Կազմակերպչական հարցերի քննարկում | Դասղեկ, դասարան |
| II | Կազմակերպել զրույց նվիրված Հայաստանի անկախությանը | Դասղեկ, դասարան |
| III | Ինչ է իրենից ներկայացնում վիրուսը և ինչպես կանխարգելել այն | Դասղեկ, դասարան |
| IV | Ի՞նչ է հայրենասիրությունը | Դասղեկ, դասարան |
| V | Ես գիտեմ իմ իրավունքներն ու պարտականությունները | Դասղեկ, դասարան |
| VI | Մասնագիտական կողմնորոշման թեմայի շուրջ զրույց | Դասղեկ, դասարան |
| VII | Քաղաքամայր Երևան | Դասղեկ, դասարան |
| VIII | Հայաստանի տեսարժան վայրերը: Ֆիլմի դիտում | Դասղեկ, դասարան |
| IX | Փարիզի տեսարժան վայրերը: Ֆիլմի դիտում | Դասղեկ, դասարան |
| X | Զրույց: Համակարգիչն ընկե՞ր է, թե թշնամի | Դասղեկ, դասարան |
| XI | Երկրագունդը բոլորիս տունն է | Դասղեկ, դասարան |
| XII | Ինչպես են տոնում Ամանորը այլ երկրներում | Դասղեկ, դասարան |
| XIII | Կիսամյակների գնահատականների ամփոփում | Դասղեկ, դասարան |